VEOLIA

Ջուր

«27» հոկտեմբերի 2023թ.

N ՄՔԿ 38532

«Արծաթ» ՓԲԸ
Լ/ա Արայիկ Մարգարյանին
/հասցեն՝ ք. Երևան, Ֆուչիկի 6/1/

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ի պատասխան Ձեր 04.10.2023թ. դիմումի՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ՎՋ4904/2023 ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը: Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի առնվազն 2 փաթեթ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ ստանալու նպատակով ներկայացնել ընկերության շահագործման համապատասխան տեղամաս ք. Երևան, Դավթաշեն 8 փողոց 64 հասցեով: Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի 1 բնօրինակ փաթեթը պահվելու է ընկերությունում:
Հողային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:
Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը հրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը՝ ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, առևտրային հաշվառքի սարք տեղակայելու և Ձեզ հետ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:
Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետությանն անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
*Առդիր՝ 2 թերթ:*

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԹԻՎ 4

Պատասխանատու՝
Լ. Մարտիրոսյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 38532
«27» 10 2023թ.

ՀՀ, ք. Երևան, 375025, Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: am.water.office.all@veolia.com
Web site: www.veolia.am

VEOLIA

«Հաստատում եմ»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա.Մարտիրոսյան
«26» 10 2023թ.

# Տեխնիկական պայման ՎՋ 4904/2023

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման նախագծման)

| Ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս 7/5, 7/7 և 7/24 | «Արծար» ՓԲԸ | 099453523 |
|---|---|---|
| /Տարածքի հասցե/ | /Անուն, ազգանուն/ | /Հեռախոսահամար/ |




291573

| Համակարգ | Ջրամատակարարում | Ջրահեռացում | Հեղեղատար | Հիդրանտի տեղադրման |
|---|---|---|---|---|
| Կոմունիկացիայի գտնվելու վայրը | Տ.Պետրոսյան փողոց | Եղվարդի խճուղի | Եղվարդի խճուղի | |
| Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը | d=300մմ, P=2.5մթն. պող. | d=1200մմ | d=400մմ | |
| Միացման կետը | Տ.Պետրոսյան փողոցում գտնվող ջրագծից | Եղվարդի խճուղով անցնող կոյուղատարին | Եղվարդի խճուղով անցնող հեղեղատարին | |
| Միացման տրամագիծը | | | | |
| Ջրաչափի տրամագիծը | Համաձայն նախագծի | | | |
| Այլ պահանջներ | 1.Նոր ջրամիացումը կիրականացվի գոյություն ունեցող ջրագիծը միացման կետում խցափակելուց հետո 2.Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր 3.Բաժանորդային քարտ 06-0034-6-1 4.Նշված ջրագծից հնարավոր է տրամադրել առավելագույնը 3.0լ/վ ջրաքանակ | Կոյուղատարի միացման կետում կառուցել դիտահոր | Հեղեղատարի միացման կետում կառուցել դիտահոր | Տես * կետը |
| Ջրամատակարարման գրաֆիկը | Շուրջօրյա | | | |

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ ։

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին ։Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին ։

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարաձգման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/ կամ համաձայնությունները:

* Հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀՇՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ թիվ 1025-Ն որոշման, թիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հասցեում կառուցվում է բազմաբնակարան շենք, իսկ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ինքնահոս մատակարարվող ջրի ճնշումը 2.5մթն. է, ապա անհրաժեշտ է նախատեսել ինվերտորային պոմպ:

Քանի որ վերոնշյալ տարածքով անցնող Փ50մմ ջրագծից միացված են «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության մի շարք բաժանորդներ, ուստի ջրագծի հետ կապված յուրաքանչյուր գործողություն անհրաժեշտ է համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ:

«Մաշտոց» տեղամասի պետ՝ Հ.Դանիելյան

Ինժեներական խմբի պատասխանատու՝ Ա.Կարապետյան